

**Բանկի պահանջներ, որոնք ներկայացվում են
Գնահատող ընկերություններին**

**Գնահատող ընկերությունները/Գնահատողները պետք է
համապատասխանեն հետևյալ պահանջներին**

- Սահմանված տեսակի Գնահատման գործունեություն իրականացնելու լիցենզիայի առկայություն,
- ՀՀ տարածքում ռիելտորական գործունեության իրականացման ու աճուրդի կազմակերպիչի՝ սահմանված տեսակի (եթե այդպիսին կա) լիցենզիայի առկայություն,
- Գնահատման ծառայությունների շուկայում Գնահատող ընկերության աշխատանքային փորձ 2 (երկու) տարուց ոչ պակաս:
- Այլ բանկերի և/կամ ֆինանսական կազմակերպությունների հետ համագործակցության փորձ,
- Մասնաճյուղային և/կամ գործակալական ցանցի առկայություն, շրջաններում աշխատելու այլ հնարավորություն,
- Գնահատող ընկերության, Բանկում առանձին հաշվի առկայություն՝ Բանկի կողմից գրավ ընդունվող գույքի գնահատման վճարների համար: Հաշվի սպասարկման պայմանները որոշում է Բանկը:
- Բանկում Գնահատող ընկերության և/կամ փոխկապակցված ֆիզ. անձանց անունով ժամկետային ավանդի/ավանդների առկայություն՝ 5.000.000 (հինգ միլիոն) ՀՀ դրամից կամ դրան համարժեք ԱՄՆ դոլարից Եվրոյից ոչ պակաս (հաշվի բացման օրվա արտարժույթով) համագործակցության մասին պայմանագրի գործողության ողջ ընթացքում,
- Գնահատող ընկերության անձնակազմում առնվազն 2 (երկու) անձանց առկայություն, որոնց համար տվյալ ընկերությունը հիմնական աշխատատեղն է և որոնք ունեն՝
 - ա) Կրթության փաստաթուղթ, որը հաստատում է Գնահատող գործունեության բնագավառում մասնագիտական գիտելիքներ ունենալու մասին՝ Գնահատող գործունեության բնագավառում բարձրագույն մասնագիտական կրթության, լրացուցիչ մասնագիտական կրթության կամ մասնագիտական վերապատրաստման ծրագրերի համաձայն,
 - բ) Գնահատող գործունեության բնագավառում առնվազն 2 (երկու) տարվա աշխատանքային փորձի առկայություն՝ որը հաստատված է կրթության մասին փաստաթղթով ու աշխատանքային գրքույկում գրառումներով:
- Քաղաքացիական պատասխանատվության ապահովագրության վկայական՝ առնվազն 50,000,000 ՀՀ դրամի չափով (ՀՀ կանոնադրության պահանջների համաձայն):

- Անդամակցություն Գնահատողների ինքնակարգավորիչ կազմակերպություններից մեկում (ցանկալի է):
- Գնահատողների ինքնակարգավորիչ կազմակերպությունների անդամ հանդիսացող Գնահատողներին տրված հանձնարարական նամակների առկայություն (ցանկալի է):
- Բանկին Համագործակցության առաջարկ ներկայացնելուց 10 օր առաջ Գնահատող ընկերությունը յուրաքանչյուր մակարդակի բյուջեներում կամ պետական արտաբյուջետային ֆոնդերում չպետք է ունենա ավելացած հարկերի, գանձումների ու այլ վճարումների գծով պարտքեր:
- Բանկի Հաճախորդների գույքի գնահատմամբ զբաղվող Գնահատող ընկերությունների ու գնահատողների նկատմամբ քրեական ու վարչական գործերի հարուցման դեպքերի բացակայություն:
- Վերջին 2 (երկու) տարվա ընթացքում «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ հետ աշխատանքային բացասական փորձի ու Գնահատող ընկերության հետ համագործակցության դադարեցման մասին որոշման ընդունման բացակայություն:
- Անկախ Գնահատող ընկերությունը Բանկի/գրավատուի հետ փոխկապակցված անձ չի հանդիսանում (չկա ընդհանուր սեփականություն և/կամ փոխադարձ երաշխիքներ և/կամ պարտավորություններ, կանոնադրական կապիտալում մասնակցության միջոցով միմյանց գույքի հսկողություն, ինչպես նաև հաճախորդի/գրավատուի Անկախ Գնահատող ընկերության ղեկավար պաշտոնների միատեղում մեկ ֆիզիկական անձով):